Atlantic Health System, Inc. (հետագայում՝ AHS) ընկերությունը Ցածր եկամուտ ունեցող, ապահովագրություն չունեցող կամ թերի ապահովագրություն ունեցող հիվանդներին ֆինանսական օժանդակություն ("Financial Assistance Policy") տրամադրող կազմակերպություն է, որն AHS հիվանդանոցներում բոլոր իրավասու շահառուների համար լրիվ կամ մասնակի վճարումներ է կատարում շտապ կամ անհետագելի բուժական օգնության համար: Այն ներառում է Morristown Medical Center, Overlook Medical Center, Chilton Medical Center, Newton Medical Center, Atlantic Rehabilitation Institute, Hackettstown Medical Center բժշկական կենտրոնները և AHS ցանկացած այլ հաստատությունները, որոնք՝ համաձայն դաշնային օրենքների, ծառայությունների մատակարարման պարտավորություն ունեն: Իրենց հաշիվները վճարելու օժանդակություն ստանալու համար, հիվանդները պետք է դիմում-հայտ ներկայացնեն և բավարարեն ֆինանսական օժանդակություն ստանալու ստորև պահանջներին:

Ինչպե՞ս ստանալ ֆինանսական օժանդակություն՝ հաշիվները վճարելու համար

Հիվանդանոցային ծախսերի հաշիվները վճարելու համար ձեր ֆինանսական օժանդակության մեծությունը որոշելիս մենք դիտարկում ենք ձեր ընտանիքի ընդհանուր եկամուտը և համեմատում ենք այն Դաշնային աղքատության մակարդակի ցուցանիշի մեծության հետ: Դաշնային աղքատության մակարդակի ցուցանիշը ԱՄՆ-ի կառավարության հատատած այն նվազագույն գումարն է, որն անհրաժեշտ է ընտանիքին սննդի, բնակարանային և այլ կարիքների ծախսերը հոգալու համար: Հիվանդանոցային ծախսերի հաշիվները վճարելու ֆինանսական օժանդակություն դուք կարող եք ստանալ NJ's Charity Care ծրագրի շրջանակներում, եթե

1) Չունեք բժշկական ապահովագրություն (կամ ունեք բժշկական ապահովագրություն, որը միայն մասնակի է կարող վճարել ձեզ ներկայացված հաշիվը);
2) Չեք համապատասխանում մասնավոր ապահովագրության կամ պետական աջակցությամբ ապահովագրության պահանջներին;
3) Համապատասխանում եք պետության կողմից սահմանված սահմանափակ եկամուտների և ակտիվների ցուցանիշներին:

Charity Care բարեգործական ծրագիրը 100 տոկոսով կփոխհատուցի այն հիվանդների հիվանդանոցային ծախսերը, որոնց ընտանեկան համախառն եկամուտը պակաս կամ հավասար է դաշնային աղքատության մակարդակի 200% ցուցանիշից, և մասնակի կփոխհատուցի այն հիվանդների հիվանդանոցային ծախսերը, որոնց ընտանեկան համախառն եկամուտը ավելին է դաշնային աղքատության մակարդակի 200% ցուցանիշից, սակայն պակաս կամ հավասար է դաշնային աղքատության մակարդակի 300% ցուցանիշից:

Եթե ապահովագրություն չունեք, ապրում եք Նյու Ջերսիում և չեք համապատասխանում ֆինանսական օժանդակության (բացառությամբ՝ բարեգործական օգնություն) դաշնային կամ պետական ծրագրերի պահանջներին, ապա, նույնիսկ այս դեպքում, կարող եք մասնակի փոխհատուցում ստանալ շտապ կամ անհետաձգելի բուժական օգնության համար ձեզ ներկայացված հաշվի դեպքում, եթե ձեր ընտանիքի համախառն եկամուտը քիչ է Դաշնային աղքատության մակարդակի ցուցանիշի հնգապատիկից (Դաշնային աղքատության մակարդակի ցուցանիշի 500%-ից):

Ինչպե՞ս ստանալ Ֆինանսական օժանդակության հավաստագրի պատճենը: Ինչպե՞ս դիմում-հայտ ներկայացնել

- Առցանց՝ www.atlantichealth.org/financialassistance
- Գրեք մեզ կամ զանգահարեք՝
    - Morristown Medical Center, 100 Madison Avenue, Morristown, New Jersey 07960, Financial Counseling Office, հեռ.՝ 973-971-8964, ֆաքս՝ 973-401-2433, էլ. փոստ՝ fior.gonzalez@atlantichealth.org
    - Overlook Medical Center, 99 Beauvoir Avenue, Summit, New Jersey, 07901, հեռ.՝ # 908-522-4689, ֆաքս՝ 908-522-2031, էլ. փոստ՝ angela.algarin@atlantichealth.org
    - Chilton Medical Center, 97 West Parkway, Pompton Plains, New Jersey, 07444, հեռ.՝ # 973-831-5113, ֆաքս՝ 973-907-1037, էլ. փոստ՝ adriana.munoz@atlantichealth.org
    - Newton Medical Center, 175 High Street, Newton, New Jersey, 07860, հեռ.՝ # 973-579-8407, ֆաքս՝ 973-579-8814, էլ. փոստ՝ victoria.goncalves@atlantichealth.org

- Hackettstown Medical Center, 651 Willow Grove Street, Hackettstown, New Jersey, 07840, հեռ.՝ # 908-850-6902, ֆաքս՝ 908-441-1146, էլ. փոստ՝ margit.santos@atlantichealth.org
- Հաճախորդների սպասարկման բաժին՝ 1-800-619-4024.

- Ներկայացեք անձամբ՝ անհետաձգելի բուժական օգնության բաժանմունք կամ Ֆինանսական խորհրդատվության գրասենյակներ

Դուք անձամբ կարող եք դիմումը բերել հիվանդանոց, ուղարկել այն փոստով, ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով: AHS-ը կդիտարկի ձեր հայտը ավարտուն ներկայացնելուց հետո և կհաշվարկի, թե որքան օժանդակություն կարող եք ստանալ ձեր հաշիվը վճարելու համար: AHS-ը չի դիտարկի անավարտ դիմում-հայտերը, սակայն ձեզ հնարավորություն կտա լրացնել բացակայող տեղեկությունները որոշ ժամկետի սահմաններում:

Կա՞ արդյոք թարգմանչական ծառայություն

Ֆինանսական օժանդակության հավաստագիրը, դիմում-հայտը և ֆինանսական օժանդակության ամփոփ հավաստագիրը կարող են ձեզ տրվել ձեր մայրենի լեզվի թարգմանությամբ: Հիվանդանոցային ծախսերի հաշիվները վճարելու համար ֆինանսական օժանդակություն կամ այլ հարցերով մեր ծառայությունների մասին տեղեկություններ ստանալու համար, զանգահարե՛ք Հաճախորդների սպասարկման բաժին՝ 1-800-619-4024 հեռախոսահամարով, կամ այցելեք մեր կայքէջը: Դուք կարող եք նաև այցելել մեր ֆինանսական խորհրդատվության հիվանդանոցային գրասենյակներից մեկը՝ **երկուշաբթիից ուրբաթ, ժամը 8:00-ից մինչև 16:00-ն**: